

ԳՐԱՎԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

այսուհետ՝ «Գրավատու»,

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը
ի դեմս (եթե իրավ. անձ է) _____, որը գործում է

_____ պաշտոնը, անունը, ազգանունը
_____ հիման վրա, մի կողմից, և _____,

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը
այսուհետ՝ «Գրավառու», ի դեմս (եթե իրավ. անձ է) _____,

_____ պաշտոնը, անունը, ազգանունը
որը գործում է _____ հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Ի ապահովում Գրավատուի և Գրավառուի միջև _____ թ. կնքված մատակարարման թիվ _____ պայմանագրով իր պարտականությունների կատարման, Գրավատուն Գրավառուին է հանձնում թիվ _____ 1 հավելվածում նշված ապրանքը (գույքը):

1.2. Գրավ հանձնվող գույքի արժեքը կազմում է _____ (_____)

ՀՀ դրամ:

1.3. Թիվ 1 հավելվածում նշված գույքը սեփականության իրավունքով պատկանում է Գրավատուին:

1.4. Գրավն ապահովում է Գրավառուի պահանջն այն ծավալով, որն այն ունի փաստացի բավարարման պահին: Այն ներառում է տոկոսները, տուժանքը, կատարման ժամկետի կետանցով պատճառված վնասները, գրավ դրված գույքը պահելու և պահպանելու համար Գրավառուի կատարած, ինչպես նաև բռնագանձելու հետ կապված ծախսերի հատուցումը:

1.5. Գրավով ապահովվող պարտավորության կատարման էությունը, չափը և ժամկետները որոշվում են թիվ 2 հավելվածով:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Գրավատուն

2.1.1. սույն պայմանագիրն ուժի մեջծ մտնելու պահից _____ օրվա ընթացքում պարտավոր է Գրավառուին հանձնել գույք՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

Հանձնումն իրականացվում է _____ հասցեում, որի ընթացքում Կողմերը կազմում են ընդունման- հանձնման ակտ, որում արտացոլվում են՝ գույքի անվանումը, քանակը և որակը, ինչպես նաև կողմերի անվանումներն ու ստորագրությունները.

2.1.2. իրավունք ունի փաստաթղթերով և փաստացի ստուգել գրավ դրված գույքի առկայությունը, քանակը, վիճակը և պահպանման պայմանները:

2.1.3. Գրավառուի համաձայնությամբ իրավունք ունի փոխարինել գրավի առարկան (գույքը).

2.1.4. Գրավառուի համաձայնությամբ իրավունք ունի օտարել գրավ դրված գույքն այլ անձանց.

2.1.5. վարում է գրավի վերաբերյալ գրառումների գիրք, որին ծանոթանալու համար վերջինիս պահանջով այն ներկայացնում է Գրավառուին.

2.1.6. ապահովում է սույն պայմանագրի նոտարական ձևակերպումը:

2.2. Գրավառուն՝

2.2.1. պարտավորվում է սույն պայմանագրում նշված պայմաններով Գրավատուից ընդունել գույքը.

2.2.2. գրավ դրված գույքը Գրավատուի հաշվին լրիվ արժեքով ապահովագրում է կորստի և վնասվածքների ռիսկերից.

2.2.3. անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում գրավ դրված գույքը պահպանելու, ներառյալ՝ այն երրորդ անձանց ունեցություններից և պահանջներից պաշտպանելու համար.

2.2.4. մյուս կողմին անհապաղ տեղեկացնում է գրավ դրված գույքի կորստի կամ վնասվածքների սպառնալիքի ծագման մասին.

2.2.5. իրավունք չունի օգտվել գրավ դրված գույքից.

2.2.6. Գրավատուի կողմից մատակարարման պայմանագրով պարտավորությունները չկատարելու դեպքում իրավունք ունի Գրավատուի նկատմամբ իր պահանջները բավարարել՝ սույն պայմանագրի 3- ըր կետով սահմանված կարգով իրացված գույքի հաշվին:

2.3. Գույքին հաջորդող գրավը թույլատրվում է միայն Գրավառուի գրավոր համաձայնությամբ:

3. Գույքի վրա բռնագանձում տարածելը

3.1. Գրավառուի պահանջները բավարարելու համար գրավ դրված գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել Գրավատուի կողմից գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու այնպիսի հանգամանքներում, որոնց համար վերջինս պատասխանատվություն է կրում:

3.2. Գրավ դրված գույքի վրա բռնագանձումը տարածվում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության համաձայն:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՄ-ՄՄԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել. այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլ ամենը, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. Այլ պայմաններ

5.1. Սույն պայմանագրի դադարեցման հիմքերը որոշվում են գործող օրենսդրությամբ:

5.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում նոտարական վավերացման պահից:

5.3. Սույն պայմանագրում բոլոր փոփոխությունները և լրացումները պետք է կատարվեն գրավոր: Գրանք պետք է վավերացնի նոտարը:

5.4. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ և մեկ օրինակ տրվում է նոտարին:

5.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտականությունները չկատարող կամ անպատշաճ կատարող կողմը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

Գրավառու

ստորագրություն

Գրավառու

ստորագրություն